ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1962 թվականի սեպտեմբերի 23-ին, կիրակի, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գեր-աշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը Մայր Տաճարում սուրբ պատարագի ընթացքում սարկավագ ձեռնադրեց Հոգևոր Ճեմարանի Գ լսարանի 1962 թվականի ուսումնական տարվա շրջանավարտ 4 ուսանողներին։

Իր անդրանիկ պատարագն էր մատուցում հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Բերբերյանը։

Կիրակի առավոտյան ժամերգությունից հետո, վերատեսուչ սրբազանը կատարեց նորընծաների կոչման արարողությունը և Ձեռնադրության Մաշտոցի համաձայն տվեց «պաշտոն փոքր սարկաւագութեան»։

Այնուհետև պատարագը շարունակվում է մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած դոյով» աղոթքը և սկսվում է բուն ձեռնադրության արարողությունը։

Խարտավիլակ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը դիմում է ձեռնադրող սրբազանին «ի ձայն բարձր, զի կիսասարկաւագունս, զորս ընծայէ քեզ, ձեռնադրեսցես մեզ ի սարկաւագս»։

Ձեռնադրող սրբազանը ապա հարցեր է տալիս նորընծաների հոգևոր արժանավորության և կենցաղի սրբության մասին։

Խարտավիլակի դրական վկայությունից հետո, ձեռնադրող սրբազանն ասում է. «Կոչեմք (անունները տալով) զկիսարկաւագունս ի պաշտոն սարկաւագութեան»։ Ապա նվիրյալները ծնրադիր մոտենում են Ս. Սեղանին։

Ձեռնադրող սրբազանը «զաջն ի վերայ գլխոց նուիրելոցն» դնելով, կարդում է ձեռնադրության մեծ աղոթքը։

Գեղեցիկ է այն պահը, երբ նորընծաները, ի նշան աշխարհից հրաժարման, դառնալով «յարևմուտս», «զձեռս ի վեր ափ ի բաց» բարձրացնում են, մինչ կղերիկոսների խումբը երիցս երգում է «Աստուածային և երկնաւոր շնորհս» ձեռնադրության շարականը։

Ժողովուրդը միաբերան վկայում է՝ «Արժանի են»։

Ապա նորընծաները բոլորակի շարվում են ձեռնադրող սրբազանի աթոռի շուրջը, որը «զաջն ի վերայ գլխոյն» դնելով, յուրաքանչյուրին ասում է. «Ես դնեմ ձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի զաստիճան սարկաւագութեան անարատ պաշտել առաջի Սրբոյ Սեղանոյս Աստուծոյ»։

Սարկավագների ձեռնադրության հուզիչ արարողությունը վերջանում է ձեռնադրող սրբազանի «Պահպանիչ»-ով։

Սարկավագների ձեռնադրությանը ներկա էին Վեհափառ Հայրապետը, ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը և գեր-աշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը։

Սուրբ պատարագից հետո, վերատեսուչ սրբազանը նորընծա սարկավագներին առաջնորդում է Վեհարան՝ Վեհափառ Հայրապետի օրհնությունն ստանալու համար։

Նորընծա սարկավագներն են.

Բարեշնորհ Ժիրայր սարկավագ Կոնսուլյան, *ծնված 1935 թվականին Կահիրեում (Եգիպտոս), Հոգևոր Ճեմարան է ընդունվել 1957—1958 ուսումնական տարում։*

Բարեշնորհ Կարպիս սարկավագ Սերայդարյան, *ծնված 1938 թվականին Բուխարեստում (Ռումինիա), Ճեմարան է ընդունվել 1956—1957 ուսումնական տարում։*

Բարեշնորհ Արշակ սարկավագ Տերտերյան, *ծնված 1937 թվականին Սպահանի շրջանի Խոգիան գյուղում (Իրան), Ճեմարան է ընդունվել 1956—1957 ուսումնական տարում։*

Բարեշնորհ Զոնրապ սարկավագ Շամլյան, *ծնված 1941 թվականին Հալեպում (Սիրիա), Ճեմարան է ընդունվել 1959—1960 ուսումնական տարում։*